# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N2

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Արմստրոյ» ՍՊԸ -ի միջև 2025թ. օգոստոսի 1-ին կնքված N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/10 ծածկագրով տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** **«30» 04 2026թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ***«Արմստրոյ» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա. Առաքելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,*** մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև ***2025թ. օգոստոսի 1-ին կնքված «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիկի բժշկական ամբուլատորիայի կառուցում», «ՀՀ Գեղարքունիքի մարզի Վաղաշենի բժշկական ամբուլատորիայի կառուցում» ծրագրերի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների*** պետական գնման N **ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/10** պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 4-րդ «**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**» բաժնի 4.1-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է
Չափաբաժին 2՝ **7,291,373.00 (յոթ միլիոն երկու հարյուր իննսունմեկ հազար երեք հարյուր յոթանասուներեք)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, որից **1,591,373.00** (մեկ միլիոն հինգ հարյուր իննսունմեկ հազար երեք հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակայվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** արժեքը,
Չափաբաժին 3՝ **7,125,555.00 (յոթ միլիոն հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր հիսունհինգ)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, որից **1,425,555.00** (մեկ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր հիսունհինգ) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակայվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** արժեքը:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:
3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ | «Արմստրոյ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037, Կ.Ուլնեցու 31 | Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, Ք. Սիսիան, Ա. Մանուկյան 15 |
| ՀՎՀՀ՝ 00846441 | ՀՎՀՀ՝ 09809552 |
| Չափ. 2՝ Հ/Հ՝ 900011061349 | Հ/Հ՝ 1150002922490100 |
| Չափ. 3՝ Հ/Հ՝ 900011061356 | |
| Կենտրոնական գանձապետարան | Բանկ՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ |
| Գործադիր տնօրեն | Տնօրեն |
| Սարգիս Բաղինյան | Արման Առաքելյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |